# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnikigyuxapetaran2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 8-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՕՐԱԿԱՐԳԸ.

1. ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ
2. <<ԳԱԶՊՐՈՄ-ԱՐՄԵՆԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԻԳԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnikigyuxapetaran2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 9-Ա

## ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, ավագանին որոշում է՝

Համայնքի 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարումը՝ եկամուտների մասով՝ 775.8 հազ. դրամ և ծախսերի մասով՝ 2951.9 հազ. դրամ, ընդունել ի գիտություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԻԳԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnikigyuxapetaran2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 10-Ա

### <<ԳԱԶՊՐՈՄ-ԱՐՄԵՆԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի << Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> թիվ 1851-Ն որոշման, ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց և անժամկետ հանձնել << ԳԱԶՊՐՈՄ-ԱՐՄԵՆԻԱ>> փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Դարբնիկ համայնք,

Գույքի ծածկագիրն է՝ -

Գույքը՝ d=108 3 մմ, h=329 մ
d=76 3 մմ, L=210 մ
d=76 3 մմ, L=392մ

1 հատ պահարանային ճնշման կարգավորիչ կայան;

Գազատարի երկարությունը կազմում է 931 գծմ;

Գույքի նպատակային նշանակությունը՝ - համայնքի Կամո Բալայան, գլխավոր, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ փողոցների ցածր ճնշման գազատար;

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԻԳԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnikigyuxapetaran2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 11-Ն

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Լյովայի Գզիրյանի հայտը, ավագանին որոշում է՝

1. Սեփականության իրավունքով Արթուր Լյովայի Գզիրյանին պատկանող 03-036-0124-0003 կադաստրային ծածկագրով 0.29 հա գյուղատնտեսական նշանակության՝ արոտավայրի նպատակային նշանակությունը փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությանը, սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԻԳԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnikigyuxapetaran2011@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 12-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԲՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով, Դարբնիկ համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում `

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի0.06604 հողն օտարել աճուրդային եղանակով:
2. Հաստատել հողամասի լոտը, մեկնարկային գինը, նախավճարի և քայլի չափերը՝ համաձայն աղյուսակի:
3. Սույն որոշումն իրականացնել առաջիկա երեք ամսվա ընթացքում:

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը | Նախավճ. չափը /հազ. դրամ/ | Քայլի չափը /հազ. դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | այլ հողա-տեսք | գ. Դարբնիկ | 03-036-0012-0004 | 0.06604 | Գյուղա-տնտե-սական | այլ հողա-տեսք | այլ հողա-տեսք | 200.0 | 10.0 | 10.0 | Չունի |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԻԳԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ